

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՄ

ՀՌՈՄԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՄ

1979 թվականի նոյեմբերի 29-ին Հռոմի Քահանայապետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը այցելեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռին:

Հայոց Պատրիարքարանի շքամուտքի առջև Սրբազան Պապին դիմավորեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը՝ շրջապատված հոգևոր դասով և եկեղեցական-ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներով:

Ողջագուրումից հետո Սրբազան Պապն ու Հայոց Պատրիարքը եկեղեցական թափորով առաջնորդվեցին Հայոց պատմական ու գեղեցիկ Պատրիարքարանի դահլիճ, որտեղ ներկա գտնվող համայնքային ներկայացուցիչները մեծ ոգևորությամբ և բուռն ծափահարություններով դիմավորեցին Սրբազան քահանայապետին, որը գոհունակությամբ բազմեց Իրեն հատկացված բազկաթոռին:

Նախ Հայոց ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքը բարի գալուստ մաղթեց Հովհաննես-Պողոս Բ Պապին և ապա արտահայտեց հայ համայնքի ուրախությունն ու գոհունակությունը այդ առթիվ ու մաղթեց, որ իրականանա Նորին Սրբության՝ Եկեղեցիների միության և աշխարհի խաղաղության ի նպաստ բոլոր բարի երազանքները:

Այնուհետև Սրբազան Քահանայապետը հանդես եկավ պատասխան ճառով և Իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց Հայ Եկեղեցու հարկի տակ գտնվելու համար և անդրադարձավ Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի՝ Պողոս Զ Պապին Վատիկան տված այցելությանը և շեշտեց, որ Ինքը լավ է ճանաչում ու գնահատում Հայաստանյայց Եկեղեցին:

Ապա Սրբազան Պապն ու Հայոց Պատրիարքը մտերիմ և ջերմ զրույց ունենալուց հետո, ամպհովանու ներքո և զանգակների ղողանջների տակ, «Հրաշափառ»-ով առաջնորդվեցին աթոռանիստ Մայր եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ կարճ արարողություն և միատեղ աղոթք, որից հետո փոխանակվեցին ճառեր: